ՎԱՐԴԳԵՍ ՄԽՔԱՅԵԼՅԱՆ

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ (1915)

Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրման Կենտրոն

Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին (1915)
Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրման Կենտրոն
Երեւան, 1997

Գրքույկում ներկայացված են 1915 թ. Օսմանյան Կայսրությունում հայոց կողմից մղված ինքնապաշտպանական մարտերի մասին Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս՝ պրոֆ. Վ.Միքայելյանի հոդվածը: Աշխատանքը որպես զեկուցում հեղինակը կարդացել է Գերմանիայի Բոխում քաղաքում 1996 թ. հոկտեմբերի 23-25-ը կայացած միջազգային գիտաժողովում: Գրված լինելով 1915 թ. Թուրքիայում հավատարմագրված գերմանական դիվանագետների պաշտոնական զեկույցների հիման վրա, տպագրվող աշխատանքը այդ իսկ պատճառով լուրջ հարված է պատմության թուրք կեղծարարներին:

Նախատեսված է մասնագետների եւ ընթերցող լայն շրջանակների համար:

Տեխ. խմբագիր եւ սրբագրիչ՝ Անահիտ Մանվելյան
Համակարգչային շարվածք եւ ձեւավորում՝ Մարինե Աղեկյանի

Տպագրվել է ԱՀԳՈՒԿ-ում:

© Վարդգես Միքայելյան, 1997
© Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրման Կենտրոն, 1997
Բոլոր իրավունքները վերապահված են: Սույն գրքույկի բովանդակության վերարտադրումը, ոչ շահադիտական նկատառումներով, մասամբ կամ ամբողջությամբ թույլատրվում է՝ պայմանով, որ նշվեն հեղինակը եւ հրատարակիչը:

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայ գաղթավայրերի պատմության բաժնի վարիչ: Հիմնական աշխատությունները վերաբերում են հայ գաղթավայրերի, Արցախի եւ Հայոց Ցեղասպանության պատմության հարցերին:

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Տպագրվող աշխատանքի համառոտ տարբերակը՝ «Հայկական ապստամբությունների» եւ «լրտեսության» մասին եւ հայոց ինքնապաշտպանական մարտերը երիտթուրքական ջարդարարների դեմ 1915 թ.» վերտառությամբ զեկուցումը, հեղինակը կարդացել է 1996 թ. հոկտեմբերի 23-25-ը Գերմանիայի Բոխում քաղաքում տեղի ունեցած միջազգային գիտաժողովում, որը կազմակերպել էր Բոխումի համալսարանի պատմության ֆակուլտետի արեւելյան եւ հարավ-արեւելյան Եվրոպայի պատմության ամբիոնը եւ կրում էր «Գերմանիան, Կովկասը եւ Հայաստանը 1878-ից մինչեւ այսօր» անվանումը:

Գիտական նստաշրջանը, որի թեմատիկան ընդգրկում էր մոտ 120-ամյա ժամանակաշրջան եւ որին Գերմանիայի տարբեր քաղաքների տասնյակ մասնագետների հետ միասին մասնակցում էր նաեւ Հայաստանի գիտական պատվիրակությունը, աչքի էր ընկնում ներկայացված զեկույցներում լուսաբանվող հարցերի բազմազանությամբ: Երեք օր տեւած նստաշրջանում ընթերցվեցին 25 զեկուցում. ընդ որում երկու-երեք զեկուցումներից հետո տեղի էին ունենում դրանց քննարկումները, որոնք հաճախ վերածվում էին իսկական գիտական անկաշկանդ բանավեճերի՝ հարցերի ու մոտեցումների լայն ու հիմնավոր պարզաբանմամբ: Եթե ընդհանուր հայտարարի բերենք զեկուցումների թեմատիկ ուղղվածությունը, ապա պետք է առանձնացնենք հետեւյալ հիմնահարցերը՝ ազգային-էթնիկական ընդհանրությունները եւ դրանց փոխհարաբերությունները Անդրկովկասում եւ Թուրքիայում 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբներին, հայ-թուրքական հարաբերությունները, հայոց ցեղասպանությունը

Թուրքիայում 1915 թ., Հայկական հարցը եւ այլն: Բոլոր զեկուցումները անխտիր աղերսվում էին հայոց նոր եւ նորագույն շրջանի պատմության այս կամ այն իրադարձությանը եւ ներկայացնում էին գիտական եւ արդիական անժխտելի հետաքրքրություն: Դրանց մի մասը աչքի էր ընկնում փաստական նոր նյութի ընդգրկմամբ եւ մանավանդ հարցերի նորովի եւ յուրօրինակ բարձրացմամբ ու մեկնաբանմամբ:

Վերը նշված զեկուցումների թվում էին անդրկովկասյան թաթարների եւ հայերի հարաբերությունները 20-րդ դարի սկզբներին, տաճկահայ ընդհանրության զարգացումը, Կովկասի ժողովուրդները նացիոնալիզմի նոր տեսության լույսի ներքո, հայոց ինքնապաշտպանական մարտերը երիտթուրքական հրոսակների դեմ 1915 թ., Հայկական հարցը գերմանա-թուրքական հարաբերությունների համատեքստում, հայոց ցեղասպանությունը, Գերմանիան եւ ժողովրդի բնաջնջման հետեւանքները միջազգային իրավունքում, նոր աղբյուրներ Օսմանյան կայսրության մեջ հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության սոցիալ-տնտեսական պայմանների շրջանակների վերաբերյալ, 1915 թ. հայոց ցեղասպանությունը պատմական հեռանկարում, գերմանա-թուրքական հարաբերությունները եւ Հայաստանի հիմնախնդիրները, Հայաստանի Հանրապետությունը Մերձավոր Արեւելքի ստրատեգիական եւ քաղաքական համակարգում եւ այլն:

Նշենք մի կարեւոր հանգամանք. գիտական նստաշրջանի բնորոշ հատկանիշը անպայման այն էր, որ 1915 թ. Թուրքիայում կատարված հայոց ցեղասպանությանն առնչվող հարցերը լուսաբանող օտարերկրացի հեղինակները անվերապահորեն ընդունում էին հայ բնակչության նկատմամբ - Թուրքիայում գործադրված ցեղասպանության փաստը, հիմնավորում նրա իրականացման պայմանները, շեշտում, որ այն երիտթուրքերի կողմից պետական մակարդակի բարձրացրած միջոցառում էր: Հայոց ցեղասպանության հարցերին անդրադարձող զեկուցողները դրանք լուսաբանում էին ժամանակի սոցիալ-քաղաքական ու տնտեսական պայմանների, ինչպես նաեւ միջազգային հարաբերությունների զարգացման հետ սերտորեն առնչված: Հենց դա էլ հնարավորություն էր տվել զեկուցողներին

նշված հարցերի ու խնդիրների հետազոտումը կատարել գիտական բարձր մակարդակով՝ փաստական նյութի համեմատական վերլուծման հիման վրա: Կարեւոր է նաեւ շեշտել, որ միջազգային գիտական այդ հեղինակավոր նստաշրջանում հայոց ցեղասպանության հարցերի շուրջը հանդես եկած զեկուցողները, վճռականորեն դատապարտելով երիտթուրքերի հակահայկական քաղաքականությունը, այն որակում էին որպես մարդկության դեմ ուղղված ոճրագործություն:

Կասկածից վեր է, որ Ռոխումի միջազգային գիտական նստաշրջանը առաջընթաց մի քայլ էր Հայկական հարցի, հայոց ցեղասպանության եւ առհասարակ նոր ու նորագույն ժամանակների հայոց պատմության մի շարք խնդիրների լուսաբանման ուղղությամբ:

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ (1915)

1915 թ. երիտթուրքական կառավարությունը ծրագրեց եւ իրագործեց արեւմտահայության զանգվածային բնաջնջումը. պետական մակարդակով իրականացրած այդ վայրագության՝ նոր ժամանակների առաջին ցեղասպանության զոհը դարձան 1.5 միլիոն հայեր: Սակայն թուրք ջարդարարները չբավարարվեցին դրանով: Միջազգային հասարակայնության դատապարտող կարծիքին դեմ-հանդիման թուրքական պաշտոնական շրջանները, նրանց մամուլն ու հրապարակախոսությունը իրենց եղեռնագործությունը թաքցնելու համար փորձեցին (եւ այժմ էլ փորձում են) ցեղասպանության մեղքն ու պատճառը բարդել նրա զոհերի՝ հայերի վրա: Արդեն ցեղասպանության մահասարսուռ օրերին երիտթուրքական կառավարությունը պաշտոնական միջոցներով եւ մակարդակով սկսեց տարածել այն կեղծիքը, որ իբր բռնագաղթեցումը կատարվում է միայն ճակատամերձ շրջաններում, թելադրվում է ռազմական նկատառումներով եւ նպատակ ունի կանխելու հայերի լրտեսական գործունեությունը եւ ի չիք դարձնելու նրանց ապստամբական ելույթները: Թուրքիայում ծառայող գերմանացի դիվանագետները եւ այլ պաշտոնատար անձինք իրենց զեկուցագրերում եւ այլ կարգի հաղորդումներում հստակորեն դրսեւորել են իրենց դիրքորոշումը թուրքական կողմի այդօրինակ «արդարացումների», այսպես կոչված հայկական ապստամբությունների, «բանդաների», «լրտեսության» եւ «խռովության» նկատմամբ, ցույց տալով, որ

հայ բնակչության հասցեին ներված այդ մեղադրանքները անհիմն են եւ ունեն զուտ պրոպագանդիստական նպատակ՝ ապակողմնորոշելու միջազգային հասարակական կարծիքը եւ մոլորության մեջ գցելու համաշխարհային հանրությանը:

Նախքան բուն հարցի քննությանն անցնելը անհրաժեշտ է կատարել հետեւյալ ընդմիջարկումը: Հարցն այն է, որ խնդրո առարկա թեմայի լուսաբանման համար հրապարակի վրա կան թե՛ հայկական եւ թե՛ անգլո-ֆրանսիական հարուստ նյութեր: Սակայն տվյալ դեպքում գաղափարական-քաղաքական պայքարի բերումով առավել կարեւորություն են ստացել գերմանական փաստաթղթերը, եւ դա այն պատճառով, որ թուրքական «արդարացումները» եւ հայերի հասցեին ուղղած մեղադրանքները ժխտում են ոչ թե առաջին աշխարհամարտում թուրքերի հակառակորդները, այլ նաեւ նրանց իսկ բարեկամ գերմանացիները, որոնց դեմ թուրքական կողմը այլեւս անկարող է նիզակ ճոճել եւ շարունակել այն ստահոդ պնդումները, թե դրանք իրենց հակառակորդների թխած փաստաթղթերն են: Հոդվածում օգտագործվող նյութերը քաղել ենք կայզերական Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվից (Բոնն), ուր դրանք ժամանակին հայտնվել եւ կուտակվել են՝ ըստ գերատեսչական պատկանելության:*

1915-1918 թթ. Թուրքիայից հղած իրենց պաշտոնական գրություններում գերմանական դիվանագետներն անընդհատ հաստատում էին այն իրողությունը, որ հայոց ցեղասպանությունն իրագործող թուրքական ուժերը՝ կանոնավոր եւ անկանոն զորախմբերն ու ավազակային բանդաները, անմիջականորեն ղեկավարվում էին երիտթուրքական Ջեմիետի (կոմիտեի) որոշմամբ եւ պարտավոր էին անառարկելիորեն ենթարկվել դրան:[1] Նշված առիթով Հայնրիխ Ֆիրբյուխերը՝

---

* Politisches Archiv des answärtigen Amts des kaiserlichen Deutschlands (այսուհետեւ՝ Politarchiv):

[1] Հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական փաստաթղթերի առթիվ տե՛ս մեր հոդվածը «Հայոց ցեղասպանությունը գերմանացի դիվանագետների հաղորդագրություններում» (տես «1915 թ. հայոց ցեղասպանությունը.. Պատմության եւ պատմագրության հարցեր», հոդվածների ժողովածու, Երեւան, 1995 թ., էջ 21-35):

1915-1918 թթ. Թուրքիայում պաշտոնավարող գերմանական գեներալ Լիման ֆոն Զանդերսի թարգմանիչն ու համիարզը, մեջբերել է Թալեաթի հետեւյալ կարգադրությունը, որ նա 1915 թ. սեպտեմբերի 15-ին իջեցրել էր Հալեպի ոստիկանապետին. «Ձեզ արդեն հայտնի է այն մասին, որ Ջեմիետի ցուցումով որոշված է գլխովին ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին: Նրանք, ովքեր դեմ դուրս կգան այդ որոշմանը, չեն կարող թողնվել զբաղեցրած պաշտոններում: Որքան էլ որ դաժան լինեն գործածվող միջոցառումները, պետք է վերջ դրվի հայերի գոյությանը: Ոչ մի ուշադրություն չդարձնեք ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին եւ հիվանդներին, ո՛չ էլ խղճի խայթի վրա: Ներքին գործերի մինիստր՝ Թալեաթ»:[1]

Քննարկվող հարցի համոզիչ լուսաբանման տեսակետից կարեւոր է քաղվածքներ բերել գերմանական հյուպատոսների զեկուցագրերից՝ թեմայի հիմնավորման պահանջին համեմատ փոքր-ինչ ավելի ընդարձակ տեղ տալով փաստական նյութի ներկայացմանը: Այսպես, Ալեքսանդրետի փոխհյուպատոս Հոֆմանը 1915 թ. նոյեմբերի 8-ին հայտնում էր. «Այլ է խնդիրը, երբ հայերի բռնագաղթեցումը կապում են այն երկյուղի հետ, որ իբր թե թշնամու ներխուժման պարագայում հայերը, ինչպես Վանում էր, կարող են հանդես գալ թշնամու հետ համատեղ: Այդ երկյուղն անկասկած հիմնավորված կլիներ, եթե այն վերաբերեր ոչ միայն հայերին, այլ նաեւ Թուրքիայի մյուս քրիստոնյաներին եւ անգամ շատ մահմեդականների, ինչպես Բեդերան կուսակցության քրդերին եւ Իրաքի ու Արաբիայի արաբական նշանավոր խոշոր ցեղերին: Համենայնդեպս, ակնհայտ է, որ դրանով կարող է արդարացվել միայն այն տարածքների մաքրումը, որոնք գտնվում են վտանգի տակ, այսինքն՝ ամենից առաջ առափնյա շրջանների եւ էտապային ճանապարհների երկայնքով ընկած մարզերի տարածքները, բայց ոչ երբեք արտաքսումն առհասարակ: Դրան համապատասխան, հայերի դեմ հարուցվող մեղադրանքներին չտալով լուրջ նշանակություն, թերեւս ճշմարտությանը բոլորից մոտ է այն կարծիքը, որ

[1] Heinrich Vierbücher. Armenien 1915. Die Abschlachtung eines Kulturvolkes durch die Türken. Berlin, 1987, S. 82 (Anhang).

թուրքական կառավարությունը պատերազմը դիտել է որպես ցանկալի առիթ այն բանի համար, որպեսզի ներկա պատերազմի անսպասելիորեն ներկայացրած բարենպաստ իրադրության մեջ մեկընդմիշտ ոչնչացնի հայ քրիստոնյա բնակչությանը, որը քաղաքականապես, իսկ մահմեդական-թուրքական տեսակետից նաեւ տնտեսապես կառավարության համար դարձել է մի ծանր բեռ»:[1] Այնուհետեւ Հոֆմանը փակագծերի մեջ հարկավոր է համարել նշել հետեւյալը. «Ես, իհարկե, գիտակցում եմ, որ այս դիտողությամբ ոչ մի նոր բան կայզերական կառավարությանը չեմ հայտնում. այստեղ ես այն բերում եմ լիակատարության համար»:[2] Պարզորոշ կերպով եւ կոռեկտության սահմանները պահպանելով՝ Հոֆմանը ակնարկում էր, որ իր կառավարությանը դա հայտնի է:

Թեեւ Հոֆմանի զեկուցագրում ամեն ինչ ասված է պարզ ու հստակ, բայց կարիք է զգացվում մի փոքր շտկելու Վանից հեռու Ալեքսանդրետում նստած եւ այնտեղի դեպքերի իրական ընթացքին սխալ իրազեկված փոխհյուպատոսին: Նախ, Վանում, ինչպես նաեւ Շապին Կարահիսարում, Ուրֆայում եւ այլ վայրերում տեղի էր ունեցել հայերի՝ դեպքերի հարկադրանքով կազմակերպված ինքնապաշտպանություն ընդդեմ մինչեւ ատամները զինված թուրքերի, որոնք կառավարության հրամանով ամենուրեք առաջինն էին հարձակվում հայերի վրա: Ինչ վերաբերում է Վանին, ապա այնտեղ թուրքական կանոնավոր եւ անկանոն զորքերը քրդերի հետ միասին սեղմ օղակի մեջ էին առել քաղաքն ու նրա մերձակա գյուղերը եւ արդեն հասցրել էին սրի քաշել հազարավոր հայերի՝ կենդանի մնացածներին հարկադրելով դիմել զենքի եւ պաշտպանվել: Ահա ասածը հաստատող բազմաթիվ վկայություններից մեկը, որը Ուրֆայում գերմանացի

[1] Армянский вопрос и геноцид армян в Турции. Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник. Составитель, ответ. редактор, автор предисловия,. введения и примечаний, доктор исторических наук, профессор Вардгес Микаелян (далее Армянский вопрос и геноцид армян). Ереван, 1995, стр. 291 (примечания).

[2] Նույն տեղը:

սարկավագ Յակով Կյումցլերը Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերին հաղորդել էր Վանից եկած մի ականատես մահմեդականի պատմածով. «Վանի իրավիճակի մասին այնտեղից եկած մահմեդականներից մեկը հայտնեց հետեւյալը,- գրում էր Կյումցլերը: -Վան էին եկել մերձակայքում ապրող քրդերը եւ սկսել հայերի կոտորածը: Նրանք (հայերը-Վ.Մ.) պաշտպանվում էին: Իսկույն եւեթ քրդերին օգնության հասան այնտեղ գտնվող զինվորները. ապա արյունահեղ մարտից հետո հայերը թե քրդերին եւ թե զինվորներին փախուստի մատնեցին եւ քաղաքում դարձան դրության տերը»:[1]

Երկրորդ, Վանի բնակիչների ինքնապաշտպանությունը սկսվել էր մինչեւ ռուսական զորքերի այնտեղ հայտնվելը եւ առաջ էր եկել թուրքերի սկսած ջարդի պատճառով եւ ոչ ընդհակառակը, ինչպես փորձում էին եվրոպացիների առաջ այն ներկայացնել թուրքերը: Դա շեշտում էր նաեւ Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովը՝ 1915 թ. մայիսի 1-ին Լոնդոնի ռուսական դեսպանին հեռագրելով, թե հայերի համար իմաստ չուներ մինչեւ ռուսական զորքերի ժամանումը հանդես գալ թուրքերի գերակշիռ ուժերի դեմ:[2] 1915 թ. մայիսի 11-ին Բեռլինն ուղարկած հեռագրում Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը նշում էր, որ թուրքերը Վանում մարտի ժամանակ տվել էին 1000 զոհ:[3] Գերմանական մեկ այլ փաստաթղթում Վանի դեպքերի մասին ասված էր, որ այն բանից հետո, երբ ապրիլի 15-ին Վանի հայոց երկու առաջնորդներ Վալիի հանձնարարությամբ ձեռնարկած ուղեւորության ժամանակ սպանվել էին նրա իսկ նշանակած ուղեկցող թուրք ժանդարմների կողմից, «երրորդ առաջնորդը՝ Արամը, երկյուղելով համատարած կոտորածից, հայկական թաղամասը վերածում է պաշարողական դրության. նրան հաջողվում է 30 օր դիմադրել թուրքական զորքերին, մինչեւ որ մայիսի 18-ին

[1] Армянский вопрос и геноцид армян. Ереван, 1995, стр. 185.

[2] Геноцид армян в Османской Турции. Сборник материалов и документов. Под редакцией проф. М.Г.Нерсисяна. Ереван, 1966, стр. 149.

[3] Армянский вопрос и геноцид армян, стр. 173.

ռուսները գրավեցին Վանը»:[1] Գերմանական այլ տեղեկությունների նման այս հաղորդումը եւս համապատասխանում է հայկական աղբյուրների տվյալներին:

Հայկական «խռովությունների» մասին թուրքական «պատճառաբանությունը» հիմնիվեր ժխտում է գերմանական նշանավոր ռազմական եւ դիվանագիտական գործիչ, 1915 թ. Էրզրումի գերմանական հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը: Վերջինս իր պարտքն է համարել ցույց տալ, որ նախապատրաստված հայկական ընդհանուր խռովություն մասին ապացույց չկա: «Իմ կարծիքով,- գրում էր նա 1915 թ. օգոստոսի 5-ին Կ. Պոլսի գերմանական դեսպանին,- հայկական ընդհանուր կանխամտածված եւ նախապատրաստված խռովության մասին որեւէ ապացույց բացակայում է»: Հայտնելով, որ Էրզրումի վիլայեթում չեն գտել ոչ զենք, ոչ էլ հայերին անվանարկող որեւէ փաստաթուղթ, նա իրավացիորեն մատնանշում էր, որ եթե այնտեղ պլանավորվեր խռովություն, ապա դրա համար ամենահարմար պահը 1915 թ. հունվարն էր, «երբ ռուսները կանգնած էին Էրզրումից 35 կմ հեռավորության վրա, եւ ժանդարմերիան Էրզրումում կազմված էր ընդամենը մի քանի հարյուր մարդուց, այն ժամանակ, երբ Էրզրումի միայն աշխատանքային գումարտակներում ընդգրկված էին 3-4 հազար հայեր»: Ապա Շոյբներ-Ռիխտերը հանգում է ուղղամիտ մտածող եվրոպացուն վայել հետեւյալ եզրակացությանը. «Այն, որ սեփական կառավարության կողմից ճնշված եւ վատ վերաբերմունքի արժանացած եւ, հետեւաբար, այդ պատճառով ուրիշ ազգի եւ հավատի պատկանող սահմանամերձ դժգոհ բնակչությունը միանում է հաղթականորեն ընդառաջ եկող իրեն հարազատ կրոնը դավանող հակառակորդին, որը, ընդսմին, իրեն ներկայացնում է նաեւ որպես ազատարար եւ նրան հրապուրում է իր խոստումներով, ինձ թվում է, որ եթե դա անգամ արժանի էլ է ափսոսանքի, այնուամենայնիվ բնական է, եւ նման բաներ տեղի են ունեցել նաեւ ռազմական գործողությունների մյուս թատերաբեմերում»:[2] Ժխտելով հայերի կողմից

[1] Армянский вопрос и геноцид армян, стр. 455.

[2] Նույն տեղում, էջ 210-211:

կազմակերպված կանխամտածված դավադրության որեւէ փորձ, նա այս անգամ դիմում է նաեւ մեկ այլ փաստարկման, գտնելով, որ եթե հայերը այդպիսին լինեին եւ զենք ունենային, ապա իրենց թվական գերակշռության պայմաններում եւ բոլոր դեպքերում գտնվելով մահվան սպառնալիքի տակ, նրանք ուժով կդիմադրեին բռնագաղթեցմանը: Ընդհանրացնելով իր ասելիքը այս առթիվ, նա դիտել է տալիս հետեւյալը. «Այն, որ այս կոտորածը հնարավոր է դարձել, որ տասնյակ հազարավոր հայեր, ինչպես պատահեց այստեղ (Էրզրումում-Վ.Մ.) առանց դիմադրություն ցույց տալու թույլ տվեցին ոչ մեծ թվով քրդերի եւ ավազակախմբերի իրենց նկատմամբ գործադրելու արյունալի հաշվեհարդար, թերեւս, նույնպես այն բանի ապացույցն է, թե որքան անբավարար է իրեն մարտականորեն եւ հեղափոխականորեն դրսեւորում այդ ժողովուրդը... սովորաբար բռնագաղթեցումը ամենուրեք ընթանում էր առանց միջադեպերի եւ այնուհետեւ, ավելի ուշ, նրանք (հայերը) աստվածային կամքին հնազանդվելով՝ թույլ էին տալիս կոտորելու իրենց»:[1]

Սամսունի հյուպատոս Կուկհոֆի 1915 թ. հուլիսի 4-ի հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ «հայկական ապստամբությունների» մասին աղմուկ-աղաղակը թուրքական կառավարությունը թխել էր անմեղ ժողովրդի դեմ իր հրեշավոր արարքները սքողելու համար: Հայկական նահանգներն ընդգրկած բռնագաղթեցումը եւ ջարդը այնքան դաժան են եւ այնքան հակասում են մարդկային զգայունությանը, որ անհնարին է դրանց վերաբերվել անտարբեր, որ Թուրքիան ինքն է նախաձեռնել հայերի բռնագաղթեցումն ու բնաջնջումը, դրա համար հայկական շրջաններն ուղարկելով կանոնավոր զորքեր եւ մոլեռանդ մահմեդականների խմբեր, գրում էր Կուկհոֆը: «Խոսքը ոչ պակաս, քան մի ամբողջ ժողովրդի բնաջնջման կամ բռնի իսլամացման մասին է,- հայտնում էր նա,- ժողովուրդ, որի ներկայացուցիչներն անմիջականորեն հեղափոխական շարժման չեն մասնակցել, ուրեմն անմեղ զոհեր են»: Նրա հաղորդմամբ, Սամսունի շրջանի բոլոր հայկական գյուղերը բռնի կերպով արդեն իսլամացվել էին: Միաժամանակ նա նշում է, որ «առանց բացառության բոլոր հայերը՝ տղամարդիկ, կանայք, ծերերը, երեխաները, ընդհուպ մինչեւ ծծկերները, լուսավորչական հավատի մարդիկ, բողոքականներն ու կաթոլիկները պետք է բռնագաղթեցվեն: Ոչ մի հայ քրիստոնյա չի կարող այստեղ մնալ: Երկրի խորքերից եկող լուրերը տեղեկացնում են ամբողջ քաղաքների արտաքսված բնակչության ոչնչացման մասին»: Վանգենհայմին փոխհյուպատոսը հայտնում էր, որ այն բոլոր բողոքներն ու հորդորները, որ նա արել է տեղի թուրք նահանգապետին, իզուր են անցնել. «Ամեն ինչ իզուր է՝ ֆանատիկոսներին հասու չեն բանականության փաստարկները»,- գրում էր նա:

Այսօր Թուրքիայի կառավարողների երկաթյա սկզբունքը ամբողջ երկրի իսլամացումն է, հայտնում էր Կուկհոֆը, ավելացնելով, որ դրա համար գործի են դրվել բոլոր դաժան միջոցները: Բնականաբար Կուկհոֆին առաջին հերթին հուզում էին Գերմանիայի հասցեին ուղղվող մեղադրանքները, որոնց արդարացի լինելու հարցը թեեւ նա շրջանցում է, բայց չի դատապարտում:

Ահա այդ առթիվ նրա հաղորդածը. «Այդ գործում (հայերի բնաջնջման մեջ-Վ.Մ.) ամենավատթարագույնն այն է, որ ամբողջ աշխարհը դրա համար մեղադրանքը կբարդի Գերմանիայի վրա, քանի որ թե բարեկամները եւ թե հակառակորդները ենթադրում են, որ Մեծ Դռան (Թուրքիայի) մեջ իշխանությունը լիովին գտնվում է մեր ձեռքերում, որ այդքան կտրուկ միջոցառումը (ցեղասպանությունը-Վ.Մ.) կարող էր իրագործվել միայն Գերմանիայի համաձայնությամբ»:[1]

Թե մեզ հետաքրքրող խնդրի եւ թե հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի մեղքաբաժնի առումով անպայմանորեն ուշադրության են արժանի նաեւ Աղանայի փոխհյուպատոս Բյուգեի հաղորդումները: Կանգ առնենք նրա 1915 թ. հուլիսի 24-ի զեկուցագրի վրա, որը հասցեագրված էր Վանգենհայմին:

Շեշտելով, որ հայ քրիստոնյա բնակչության ոչնչացման

[1] Армянский вопрос и геноцид армян, стр. 210-221.

[1] Politarchiv, R 14086, Ab. 22101. Տես նաեւ Армянский вопрос и геноцид армян, էջ 194-197:

բոլոր միջոցները գտնվում են կառավարության ձեռքում եւ դրանց իրականացումը նշանակում է «ոչ ավել ոչ պակաս, քան պրովինցիայի ոչնչացում» (այսինքն՝ հայկական վիլայեթների ոչնչացում-Վ.Մ.), Բյուգեն կարծում է, թե երիտթուրքական կառավարությունը հազիվ թե գիտակցի դրանց ծանր հետեւանքները երկրի հետագա զարգացման համար: Որպես եվրոպացի եւ կրթված մարդ նրա համար անհասկանալի էր այն իրողությունը, որ երիտթուրքերին ամենեւին չէր հետաքրքրում երկրի ապագան. տվյալ դեպքում նրանց միակ խնդիրը Թուրքիայի բնակչության համասեռմանացումն էր: Բայց Բյուգեն եւս եզրակացնում է, որ «հայերի բռնագաղթեցման՝ ռազմական եւ քաղաքական դրությունից բխող գաղափարի հիմնավորումն ու պաշտպանությունը կանոնավոր ստուգման դեպքում կորցնում է իր ուժը»: Աչքի առաջ ունենալով Ադանայի վիլայեթի տարածքը, նա կտրականապես ժխտում է «հայոց լրտեսության» մասին տարածվող լուրը: «Համենայնդեպս,- գրում է նա,- որքանով որ նկատի են առնվում Ադանայի պայմանները (ուր ռազմական առումով ոչ մի կարեւոր բան մատնանշել չի կարելի), հայկական լրտեսության վերաբերյալ կասկածները դատարկ պատրվակ են»: Ադանայի քաղաքական իրավիճակին տեղյակ Բյուգեն վկայում էր, որ այնտեղ «հայկական գաղտնի կամ հեղափոխական միություններ կամ նման բաներ գոյություն չունեն»: Այնուհետեւ իր զեկուցագրում նա պարզորոշ կերպով բարձրացնում է մի հարց, որին սակավ կամ ավելի շեշտադրված հանդիպում ենք նաեւ գերմանական մյուս դիվանագետների հաղորդագրերում: Նա նախ նշում է, որ Գերմանիայի եւ Թուրքիայի միջեւ տիրող հարաբերությունների յուրօրինակության պայմաններում հասարակական կարծիքը բաժանում է այն տեսակետը, որ թուրքական միջոցառումները, այն է՝ հայոց ցեղասպանությունը, իրագործվում են Գերմանիայի համաձայնությամբ եւ այդ պատճառով թուրքերի կողմից կիրառվող՝ հատկապես ժողովրդին խորապես վերաբերող միջոցառումը անպայմանորեն դիտվում է որպես մի կարգադրություն, որն հիմնվում է «գերմանացիների

հավանության, դեռ ավելին՝ նրանց կողմից սադրած լինելու վրա»:[1]

Ակնհայտորեն երեւում է, որ Բյուգեն Թուրքիայում սթափ մտածող գերմնացի դիվանագետներից մեկն էր, եւ Գերմանիայի մեղսակցության մասին իր մտահոգությունը նա արտահայտել էր տակավին 1914 թ. դեկտեմբերին՝ Վանգենհայմին հայտնելով, որ Ադանայի մարզի հայերի շրջանում տիրում է համընդհանուր երկյուղ, ըստ որի պատերազմում Գերմանիայի հաղթանակի պարագայում «թուրքական հողում վերջ կդրվի հայ ժողովրդի գոյությանը, քանի որ Գերմանիան Թուրքիայում հայերի հետապնդումների ժամանակ պաշտպանում էր թուրքական կառավարությանը եւ խրախուսում նրա գործողությունները»:[2]

1915 թ. հուլիսի 24-ի զեկուցագրում Բյուգեն շոշափել է նաեւ հայոց ցեղասպանությունը կանխելու խնդրում Գերմանիայի միջամտության հարցը: Նա նրբանկատորեն Վանգենհայմի հայեցողությանն էր թողնում այն հարցը, թե պե՞տք է արդյոք գերմանական քաղաքականության համար «համատեղ բարոյական պատասխանատվությունից, քաղաքականություն, որը (թուրքական) ամենալայն շրջաններում դիտվում է որպես միանգամայն բնական, եզրակացություն անել միջամտելու պարտականության մասին (այն դեպքում, երբ իրադրությունների բերումով նման հնարավորությունը չի բացառվում): Համենայնդեպս գերմանական ֆիրմաների (Թուրքիայում) հայտարարությունները ենթարկված են մեր միջամտության հնարավորության մասին կարծիքի ազդեցությանը»:[3]

Այն, որ «հայկական բանդաների» եւ «խռովությունների» մասին լուրերը թուրքական պրոպագանդիստական մեքենայի կողմից սարքված կեղծիքներ էին, վկայում են նաեւ գերմանական գեներալներ Կրեսն ու Լոսովը, որոնք պատերազմի ժամանակ թուրքական բանակում զբաղեցրած զինվորական բարձր պաշտոնների բերումով ավելի քան իրազեկ

[1] Politaraniv/ Konst./Ankara 96, Ab. 5932-10[12].
[2] Նույն տեղը, R 14085, Ab. 388.
[3] Նույն տեղը, Ab. 5932-10[12].

էին անցուդարձերին, գիտեին թուրքական կառավարության եւ գերագույն հրամանատարության պլանները, նաեւ՝ մասնակից էին դրանց մշակմանը: Գնդապետ Կրես ֆոն Կրեսենշտայնը (Ֆրանկենշտայն) թուրքական 4-րդ բանակի գլխավոր շտաբի պետն էր, իսկ 1918 թ. արդեն գեներալի կոչումով զբաղեցնում էր Վրաստանում Գերմանիայի գերագույն կոմիսարի պաշտոնը: 1915 թ. նոյեմբերին նա Հալեպի հյուպատոս Ռյոսելրի ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ «երբ թուրքերը կարգադրում են բռնագաղթի ճանապարհին սպանել հայ տղամարդկանց, նրանք դիմում են այն պատրվակին, թե պետք է պաշտպանվեն խռովությունից, երբ բռնաբարվում եւ առեւանգվում են կանայք եւ երեխաներ, նրանք դիմում են այն պատրվակին, թե չեն կարող վերահսկել քրդերին ու ժանդարմներին»:[1] Նույնքան հստակ էր գեներալ Լոսովի կարծիքը, որը 1918 թ. գերմանական կառավարությունից պահանջում էր կանխել կենդանի մնացած հայերի ոչնչացումը թուրքերի կողմից: Մերկացնելով Էնվերի եւ Թալեաթի երեսպաշտությունը, նա արեւելահայերին եւ արեւմտահայ փախստականներին թուրքական զորքերի առաջխաղացման հետեւանքով առաջացած վերահաս կործանումից փրկելու համար իր կառավարությանը առաջարկում էր «անմիջական ճնշում գործադրել թուրքերի վրա եւ դիմել անհապաղ գործողությունների»:[2]

1918 թ. փետրվարի 17-ին խիստ գաղտնի մի զեկուցագրով ռայխստագի անդամ, կաթոլիկական եկեղեցու քաղաքական-քարոզչական գործերին մասնակից եւ քաջատեղյակ Էրցբեգերին է դիմում Կ.Պոլսում գերմանական միհիստր-ռեզիդենտ Օպենհայմը: Էրցբերգերի գնահատմամբ «խիստ վստահելի այդ աղբյուրը» վճռապես հերքում է թուրքական իշխանությունների սարքած եւ դաշնակից ու չեզոք երկրներում տարածած նրանց պաշտոնական շրջաբերականը այսպես կոչված «հայկական ապստամբ բանդաների» մասին, նշում դրա քաղաքական-պրոպագանդիստական ուղղվածությունը՝ հայոց

[1] Армянский вопрос и геноцид армян, стр. 263.
[2] Politarchiv, R 22340, Ab. 1061.

ցեղասպանության հարցում միջազգային հանրության մոլորության մեջ գցելը: Ներելի է մի փոքր ավելի ընդարձակ քաղվածք կատարել նրա հաղորդումից, մանավանդ որ այն մի լուրջ ապտակ է նաեւ այսօր այդ կեղծիքները շրջանառության մեջ դնող թուրք եւ թուրքաֆիլ հրապարակախոսներին ու պատմաբաններին: «Թուրքական ցամաքային զորքերի օպերատիվ հաղորդագրության մեջ,- զեկուցում է ռեզիդենտը,- խոսք է գնում ապստամբ բանդաների մասին, որոնք իբր թե դաժանորեն են վարվել թուրք ազգաբնակչության հետ: Ազգությունը չի նշվում: Ես իսկույն կռահեցի, որ խոսքը կարող է գնալ հայերի մասին: Իմ ենթադրությունը հաստատվեց, երբ ինձ գաղտնի կերպով ցույց տրվեց մի երկար հաղորդագրություն, որը թուրքական կառավարությունը ուղարկել էր դեսպանորդներին, հավասարապես նաեւ մյուս ներկայացուցիչներին դաշնակից եւ չեզոք երկրներում... Այն նաեւ տրվել է Բեռլինի միսիային՝ Վոլֆի բյուրոյին փոխանցելու համար: Այստեղ (Կ. Պոլսում-Վ.Մ.) քրիստոնյա շրջաններում ուժեղ անհանգստություն է տիրում այն բանից, որ խոսքը զուտ պատրվակի մասին է, որը կարող է օգտագործվել երկրի ներսում հայերի եւ քրիստոնյաների մնացորդները ոչնչացնելու համար: <u>Բոլորը համոզված են այն բանում, որ խոսքը թուրքական իշխանությունների հորինած կեղծիքի մասին է</u> (ընդգծումը՝ Վ.Մ.): Այդ հաղորդագրությունում զետեղված երեք դեպքերի շարադրանքը ի հայտ է բերում այնքան հակասություններ, որ նրան լիակատար իրավունքով պետք է վերաբերվել անվստահությամբ: Այսպես, վարկածներից մեկում ասված է, որ իբր թե հայերը այրել են հարյուր մահմեդականների, մինչդեռ մյուս հաղորդագրության մեջ նրանք հազարն են: Հայերի հետապնդումները սանձազերծվում են այն տարածքի վրա, որը մինչեւ այժմ գրավված էր ռուսական զորքերի կողմից: Որքան ինձ հայտնի է թերթերից, թուրքերը նկատի ունենալով կնքված պայմանագիրը (զինադադարը-Վ.Մ.), ոչ մի իրավունք չունեն առաջ շարժելու իրենց զորքերը, թեկուզեւ այդ մարզը ազատագրված է ռուսներից: Թերեւս այս պարագայում հնարավորություն ներկայանա մեր

դիվանագիտության միջամտության համար»:[1]

Դժվար չէ նկատել, որ բերված տեքստում հատկապես առանձնանում են երեք հարց. առաջին՝ հերքվում է «հայկական բանդաների» մասին թուրքական պաշտոնական հաղորդումը, երկրորդ՝ այդ հերքումը ոչ միայն ռեզիդենտի անձնական կարծիքն է, այլ նաեւ Թուրքիայի ողջ քրիստոնյա բնակչության, եւ երրորդ՝ Գերմանիայի միջամտության մասին հաղորդումը:

Վերջին խնդրի կապակցությամբ ռեզիդենտը կարեւորել է հատկապես կանգ առնել Գերմանիայի եւ Ավստրիայի պատասխանատվության հարցի վրա: Նա ուղղակի մատնանշում է, որ աշխարհի քրիստոնյա ժողովուրդները բողոք են բարձրացնելու առ այն, որ նրանք թույլ են տալիս նման հանդուրժողականություն, վճռական քայլեր չձեռնարկելով թուրքական վայրագությունների դեմ: Օպենհայմը այս հարցում ավելի առաջ է գնում եւ հիմնավորում է գոնե 1918 թ. Գերմանիայի միջամտության հնարավորությունն ու անհրաժեշտությունը՝ կանխելու արեւելյան շրջանների հայ բնակչության բնաջնջումը, հիմնավորում է ռազմաքաղաքական իրադրությանը ծանոթ անձի վստահությամբ, միաժամանակ հասկացնելով, որ այս անգամ Գերմանիայի արդարացման համար շոշափելի եզրեր չեն գտնվելու. նա գրում է. «Եթե փաստորեն նորից կոտորած սկսվի, ապա այդ դեպքում, որքան էլ ես ափսոսում եմ, ստիպված կլինեմ ասել, որ այդ կշտամբանքները հարուցվում են արդարացիորեն: Ընդհակառակը, պատերազմից հետո մեզ համար շատ դժվար կլինի արդարանալ պատմության եւ մարդկության համաժողովի առաջ: Ներկայումս այլեւս չի կարելի խոսել այն մասին, որ մենք պետք է խուսափենք այն ամենից, որը կարող է երեւալ որպես միջամտություն Թուրքիայի ներքին գործերին եւ վիրավորել մեր դաշնակիցներին (Թուրքիային, ընդգծումը՝ Վ.Մ.): Քանի որ արեւելյան ճակատում տեղի ունեցող գործողությունների եւ Ուկրաինայի հետ կնքված զինադադարի հետեւանքով Թուրքիայի հետ խաղը էապես փոխվել է մեր օգտին, մենք կարող ենք եւ պետք է պնդենք Գերմանիայի կամքի վրա, որի

[1] Politarchiv, R 14098,, Ab. 10208.

համար նման չարագործությունները զզվելի են: Բայց խաղաքարտի վրա է դրված ոչ միայն կայսրության պատիվը, այլեւ գերմանական կատոլիցիզմի հեղինակությունը»:[1] Ամեն ինչ ասված է հստակ, տեղ չտալով կասկածելի հետեւությունների համար, ասված է խիստ գաղտնի՝ իշխանություններին խորհուրդ տալու ձգտումով:

Թուրքական իշխանությունները վերոհիշյալ կեղծիքները, որպես կանոն, տարածում էին հայկական ջարդեր սկսելու նախօրյակին՝ միջազգային կարծիքը ապակողմնորոշելով «հայկական բանդաների» մասին նմանօրինակ այլ լուրերով: Դա հաստատում է նաեւ ավստրիացի հայտնի հրապարակախոս դոկտոր Ստեֆան Շտայները: 1918 թ. ապրիլ-հուլիս ամիսներին թուրքական գլխավոր հրամանատարության կենտրոնակայանը նրան՝ Թուրքիայում ավստրո-հունգարական մամուլի կենտրոնի ներկայացուցչին եւ թուրքական կառավարող շրջանների հետ բարեկամական կապերի մեջ գտնվող գործչին, որը ընդ սմին վայելում էր վերջիններիս համակրանքն ու վստահությունը, հրավիրում է Արեւելյան Անատոլիա այն հաստատ հույսով, որ նա կհաստատի հայերի դեմ թուրքերի հարուցած մեղադրանքները: Բայց ավստրիացին չընկավ թուրքերի լարած թակարդը: Ավելին, ավստրո-հունգարական կառավարությանը ներկայացրած իր զեկուցագրում նա մերկացրեց թուրքական իշխանությունների ենթադրությունը տեղյակ պահելով, որ հայկական կոտորածները կազմակերպելուց առաջ թուրքերը, որպես կանոն, տարածում են այն կեղծիքը, թե «հայերը ամենամեծ ոճրագործներն են աշխարհում, իսկ թուրքերը լոկ հայկական բարբարոսությունների զոհերն են»:[2]

Որոշակի հետաքրքրություն ունի Թուրքիայում երկար տարիներ միսիոներական գործունեություն ծավալած բողոքական հոգեւորական պաստոր Շտիրի ամփոփիչ նամակը

[1] Politarhiv, R 14098, AB . 10208.

[2] Artem Ohandyanian. Armenien. Der verschwiegene Volkermord. BÖlau Verlag. Wien-Koln-Garz. 1989.156.

«Հայ ժողովրդի բռնագաղթեցումը» վերանագրով (1917 թ. օգոստոս)։ Գերմանիայի ավետարանական միսիոներական օգնության դիրեկտոր Ա. Շրայբերը նույն թվականի նոյեմբերի 28-ին Շտիրի հաղորդումը հանձնում է արտգործնախարարության տնօրինությանը։ Շտիրն այն մարդկանցից էր, որոնք խիստ քննադատում էին Բեռլինում հաստատված Վոլֆին եւ նրա բյուրոն՝ թուրքամետ եւ հակահայկական միտումների համար։ Նույն Վոլֆին մենք մի փոքր հետո դեռ կհանդիպենք 1915 թ. հոկտեմբերին Ուրֆայում նրա կատարած «քաջագործության» առիթով։ Շտիրը նշում էր, որ 1916 թ. Բեռլինում Վոլֆի բյուրոյի միջոցով տարածվում է տեղեկատվություն «հայերի զինված ապստամբությունների եւ չարագործությունների» մասին։ Այդ կեղծ լուրը տարածողները տարբերություն չէին դնում ռուսահայերի եւ արեւմտահայերի միջեւ։ Ռուսահայեր, որոնք որպես ռուսահպատակներ պարտավոր էին ծառայել ռուսական բանակում։ Շտիրը նաեւ նշում է, որ նմանապես թաքցված են փաստերը թուրքական կառավարության կողմից հրատարակած լուսանկարների ժողովածուում, որը կրում էր «Հայ հեղափոխականների մոլորությունները ու շարժումը» եւ պարունակում էր թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն եւ գերմաներեն տեքստեր։ Շտիրը գրում էր. «Հենց արդ գրքույկին իրազեկ մարդկանց համար բավարար չափով պարզվում է, թե որքան քիչ փաստական նյութ կարող են բերել թուրքերը հայերի հեղափոխական շարժման մասին։ Լուսանկարներից կեսի վրա ցույց է տրված հայերից բռնագրավված զենքը, ընդ որում Արեւելքում ցանկացած ժողովուրդ զինված է։ Մնացած լուսանկարները... վերաբերում են նախասահմանադրական ժամանակներին, երբ երիտթուրքերը եւս հանդիսանում էին հեղափոխական կուսակցություն եւ ընդ սմին, մեծ մասամբ ինքնստինքյան հասկանալի ազգային գիտակցության արտահայտմանը»։[1]

Գերմանացի դիվանագետները այս կամ այն առիթով երբեմն հստակ կերպով ուշադրություն են դարձրել հայոց ինքնապաշտպանական մարտերին։ Արդեն թռուցիկ նշվեց

[1] Politarchiv, R 14098, Ab. 39028.

Վանի հերոսամարտի մասին։ Կան հակիրճ, բայց հստակ ու հավաստի տեղեկություններ նաեւ Շապին-Կարահիսարի, Սվեդիայի, Զեյթունի եւ Ուրֆայի հերոսամարտերի մասին։ Մի փոքր կանգ առնենք դրանց վրա։ Սակայն նախքան այդ նյութերը ներկայացնելը, առանձնացնենք մի կարեւոր հանգամանք։ Գերմանացի դիվանագետներից եւ ոչ մեկը չէր բարձրացել այն գիտակցության մակարդակին, որպեսզի ճանաչեր հայ ժողովրդի ազատագրական պայքարի իրավունքը։ Եւ տվյալ դեպքում տարօրինակ ոչինչ չկա։ Կայզերական Գերմանիայի քաղաքական գործիչները չէին լինի նրանք, եթե որեւէ ժողովրդի, այդ թվում նաեւ հայերի համար վերապահեին նման «արտոնություն»։ Բայց դա, իհարկե, չի ժխտում հայոց պաշտպանական կռիվների մասին նրանց հաղորդած տվյալների նշանակությունը։

Դիմենք Շուլենբուրգի հաղորդմանը։ Գերմանական կապի զորամասի կապիտան Շուլենբուրգի ճանապարհորդական նոթերում հանդիպում ենք Շապին Կարահիսարի հայերի ինքնապաշտպանության սեղմ նկարագրությանը։ Դատելով հայկական աղբյուրների հաղորդումներից, գերմանացին հիմնականում ստույգ տեղեկություն է տալիս շապինկարահիսարցիների ինքնապաշտպանության մասին։ Այդ գեղեցիկ քաղաքը, գրում է նա, որը աշխույժ եւ առեւտրական կարեւոր կենտրոն էր, մարտերից հետո գրեթե լիովին ավերվել էր, կրակի ճարակ դարձել եւ նրա 5000 տներից պահպանվել էին ընդամենը 100-ը։ Նրա հաղորդմամբ 4000 հայեր՝ տղամարդիկ, կանայք եւ երեխաներ, ինքնապաշտպանության օրերին հին ամրոցում անցնում են պաշարողական դրության եւ այնտեղից գնդակոծում քաղաքում նստած թուրքական զորքերին։ Մարտերը տեւում են 20 օր, թուրքերը մարտի են նետում 2500 հետեւակայինների եւ 9սմ տրամագծով դաշտային հրանոթներ ու անհամեմատ գերակշիռ ուժերի ու հրանոթային անընդմեջ համազարկերի ճնշմամբ գրավում են քաղաքը։ Բարձունքում գտնվող բոլոր հայերին թուրքերը սպանում են, հայտնում է Շուլենբուրգը։ «Միայն երիտասարդ աղջիկներին, ինչպես միշտ, խնայել են, այժմ նրանց կարելի է հանդիպել շրջակա

հարեմներում, ուր նրանց պահում են որպես աղախիններ»:[1]

Նկարագրելով կարահիսարցիների կանգնեցրած պաշտպանական դիրքերը, Շուլենբուրգը առանձին ուշադրություն է դարձնում պատնեշներին, որոնք շարված էին քարով՝ շերտ առ շերտ: Ըստ նոթի հեղինակի, պաշարվածների մեծ մասը մնացել էր կենդանի, եւ նրա հաշվարկով սպանվածների թիվը կազմել է ընդամենը մի քանի հարյուր մարդ: Կարծում ենք, Շուլենբուրգը սխալվում է: Նախ, իր պատմության հենց սկզբում նա հայտնում է, թե՝ որովհետեւ ժայռի վերեւում հնարավոր չի եղել սպանվածներին թաղել, «քարե պատնեշները շրջել են սպանվածների վրա» եւ, բնականաբար, այդօրինակ սպանվածները չէին կարող մտնել նրա հաշվարկումների մեջ: Բացի այդ, թուրքերը միշտ չէ, որ բոլորին սպանում էին տեղում: Դա նրանք անում էին նաեւ գերվածներին այլ վայր տեղափոխելուց հետո:

Մուսա լեռան (Սվեդիայի) տեւական մարտերի մասին պատմող նյութերից բերենք երկու տվյալ: Ըստ Ռյոսլերի 1915 թ. սեպտեմբերի 27-ի հաղորդման, այդ ժամանակ մուսալեռցիների պայքարը դեռեւս ուժգնորեն շարունակվում էր: «Անտիոքի (Սվեդիայի) շրջանում ապստամբներին ճնշել դեռեւս չի հաջողվել,- գրում էր նա: -Այս ամսի 20-ին այնտեղ հերթական զորքեր են ուղարկվել»:[2] Շատ ավելի հետաքրքրական է մուսալեռցիների մղած հերոսամարտերի մասին մեզ արդեն ծանոթ Հոֆմանի դիրքորոշումը՝ Գերմանիայի հասցեին ուղղված սուր կշտամբանքով եւ հեռու գնացող քաղաքական հետեւությամբ: Հիշենք, որ նա Ալեքսանդրետի փոխհյուպատոսն էր, ուրեմն՝ իրադրությանն ու դեպքերին ըստ ամենայնի ծանոթ անձնավորություն: Բերենք զեկուցագրի այն հատվածը, որը վերաբերում է ֆրանսիական ռազմանավի կողմից մուսալեռցիներին փրկելու էպիզոդին եւ որի վրա էլ նա կառուցել է պատերազմից հետո Գերմանիային մեղադրելու հիմնավորումը: Նա գրում է. «Այդ հարցում ես չեմ կարող պատկերացնել ավելի ազդու ագիտացիոն նյութ, քան հետեւյալ

[1] Politarhiv, Konst./Ankara 96, R 21019, zu Ab. 13891[16].
[2] Նույն տեղում, R 14088, Ab . 30049.

պատկերը՝ մի կողմում Գերմանիան է, թուրքերի հզոր դաշնակիցը, որն անվրդով թույլ է տալիս դեպի անապատ կործանման ուղարկել հարյուր հազարավոր կանանց եւ երեխաների, իսկ մյուս կողմում ֆրանսիական ռազմանավերը, որոնք (Սվեդիայի) տակ նավի վրա են առնում 6000 այդ դժբախտներին եւ տեղափոխում անվտանգ վայր, դժբախտներ, որոնք արդեն կարծում էին, թե դատապարտված են մահվան եւ ցանկանում էին մեռնել գոնե զենքը ձեռքներին: Արդեն պարզ են դրա հետեւանքները գերմանական անվան հեղինակության համար Թուրքիայի քրիստոնյաների շրջանում»:[1]

Շտկելով Հոֆմանին, նշենք, որ հայոց ցեղասպանության հանդեպ գերմանական կառավարության բռնած հակահայ դիրքի պատճառով Գերմանիան դատապարտման ենթարկվեց ոչ միայն «Թուրքիայի քրիստոնյաների շրջանում», այլ նաեւ առաջադեմ մարդկության կողմից ամբողջ աշխարհում: Հոֆմանն ու մյուս դիվանագետները նշված աղերսով հաճախ նշում էին միայն Թուրքիայի քրիստոնյա շրջանները՝ պարզապես ելնելով տվյալ պահին Թուրքիայում տիրող քաղաքական մթնոլորտից:

Վավերական եւ համեմատաբար ընդարձակ նյութեր են պահպանվել Ուրֆայի ինքնապաշտպանության վերաբերյալ: Վերցնենք դրանցից երկուսը՝ Ուրֆայում գերմանական սարկավագ, նույն քաղաքում Գերմանիայի մերձավոր-արեւելյան միսիայի ղեկավար Յակոբ Կյունցլերի եւ Թուրքիայում գերմանական մինիստր-ռեզիդենտ Օպենհայմի հաղորդագրերը: Կյունցլերը, ազնվագույն մի անձնավորություն, իր հաղորդագրություններում տվել է Ուրֆայում տիրած դրության համառոտ պատկերն ու բնութագիրը՝ ուրֆահայերի ինքնապաշտպանությունից առաջ, մարտերի ժամանակ եւ հետո:[2] Նա հիմնավորել է, որ Ուրֆայի հայոց ինքնապաշտպանությունը 1915 թ. ամռանն ու աշնան սկզբներին քաղաքում եւ նրա շրջակայքում հայ ազգաբնակչության համար առաջացած օրհասական վիճակի հետեւանք էր,

[1] Politarhiv, Konst./Ankara 96, R 14090, Ab. 2889[16]
[2] Армянский вопрос и геноцид армян, стр. 184-186, 222, 252, 323.

տեղահանությունից եւ ոչնչացումից խուսափելու ստիպողական մի քայլ, երբ տեղի թուրք նահանգապետը սպառնում էր այլ վայրերի ու քաղաքների նման Ուրֆայի հայերին եւս բռնագաղթի ենթարկել եւ արդեն ձերբակալել էր մի քանի տասնյակ հայ երեւելիների: 1915 թ. հունիսին Կյուճյուկները այն կարծիքն է հայտնում Ռոյսլերին, որ գերմանական բլոկի երկրների հետ Թուրքիայի մեծ բարեկամության եւ սերտ համագործակցության պայմաններում՝ բավական է վերջիններիս մի թեթեւ ակնարկը թուրքական կառավարությանը՝ հնարավորին չափ արդարացի վարվելու հայերի հետ, որպեսզի կանխվի աղետը: Սա ազնիվ հոգեւոր գործչի մոլորյալ կարծիքն էր, որը, սակայն, ապացուցում էր գոնե մի բան, այն, որ Գերմանիան եւ Ավստրո-Հունգարիան նույնիսկ այդ թեթեւ ակնարկը չէին ուզում անել եւ չարեցին, քանի որ կայսերական շահախնդրությունները շատ էին գերիշխող եւ «մարդասիրական քաղաքականություն» վարելու ժամանակը չէր: Հունիս-հուլիս եւ օգոստոս ամիսներին, հայտնում էր Կյուճյուկները, Ուրֆան թուրքական զորքերի կողմից քանիցս շրջափակման է ենթարկվում, իսկ սեպտեմբերի 19-ին թուրքերը Ուրֆայում հայերի եւ ասորիների իսկական սպանդ են կազմակերպում, որի ժամանակ զոհվում է ավելի քան 300 մարդ:[1] Անդրադառնալով հայերի վիճակին ինքնապաշտպանությունից հետո, Կյուճյուկները 1916 թ. մարտի 8-ի դրությամբ փաստարկում էր. «Ուրֆայում հայեր շատ քիչ կան, եղածներն էլ բոլորը փաստորեն բանտում են... կանանցից ոմանք անապատից վերադարձել են, մյուսներին մեկնելու ժամանակ առեւանգել են մահմեդականները: Այստեղ իջեւանատանը շատ եկվորներ կան, եւ դրանք այժմ նրանք են, որոնց հարկավոր է օգնել, եւ այսպես՝ համեմատաբար ոչ մեծ թվով են (հայեր)»:[2]

Ուրֆայի ինքնապաշտպանության մասին Օպենհայմի գրառումները Կ.Պոլսի դեսպան Մետերնիխը 1915 թ. նոյեմբերի 29-ին ուղարկում է ռայխսկանցլեր Բետման-Հոլվեգին: Գրառումների հեղինակի համար աղբյուր է հանդիսացել կոմս

[1] Армянский вопрос и геноцид армян, стр. 222: Տես նաեւ Politarchiv, Konst./Ankara 170, Ab. 53a.

[2] Նույն տեղը, էջ 323: Տես նաեւ Politarchiv, Konst./Ankara 100, Ab. 3617.

Վոլֆ ֆոն Վոլֆսկելի հաղորդագրությունը: Չնայած վերջինիս թուրքամետ կեցվածքին եւ այն բանին, որ Ուրֆայում թուրքերի համար առաջացած դժվարին պահին հենց նա էր հրամայել ռմբակոծել քաղաքը,[1] այդուհանդերձ, Օպենհայմի հաղորդած փաստական նյութը հիմնականում ճիշտ է վերարտադրում դեպքերի ընթացքը: Թուրքոֆիլ գերմանացու միջոցով հիմնական փաստերը այնուամենայնիվ մատչելի են դարձել Օպենհայմին: Վերջինիս գրառում-զեկույցը պահպանվել է երկու տեղ՝ մենք այն նախ քաղել ենք 1987 թ. Դրեզդենի պետական արխիվից, ապա՝ 1989 թ. արդեն նշված քաղաքական արխիվից: Ունենք նաեւ Օպենհայմի հաղորդումը՝ 1915 թ. նոյեմբերին կարճ ժամանակ Կ.Պոլսում Գերմանիայի դեսպանի պաշտոնակատար Նոյրատի սեղմ շարադրմամբ (1915 թ. նոյեմբերի 20)՝ ուղղված կանցլեր Բետման-Հոլվեգին:[2] Հոկտեմբերի 9-ին Ռոյսլերը Նոյրատին իրազեկում է, որ երբ սեպտեմբերի վերջին Ուրֆայի հայերին հայտնի է դառնում իրենց բռնագաղթեցման մասին, նրանք որոշում են բարիկադավորել եւ դիմադրել բռնագաղթին: Ստորեւ ազատ շարադրմամբ բերում ենք Օպենհայմի գրառումը առանց որեւէ փոփոխման, որը հիմնականում համապատասխանում է հայկական տվյալներին: Չնայած նաեւ վերջիններիս հետ ունեցած տարբերություններին եւ առկա որոշ հակասություններին, կարծում ենք, այն հայ ընթերցողին, մանավանդ մասնագետների համար, որոշակի արժեք է ներկայացնում:

Ըստ Օպենհայմի, ինքնապաշտպանության սկսման համար ազդանշան են ծառայել երկու իրադարձություն: Առաջինը, երբ օգոստոսի վերջին թուրքական ժանդարմները խուզարկում էին հայկական թաղամասը եւ բռնագրավում զենքերը: Հայերը հուժկու գնդակոծությամբ փախուստի են մատնում նրանց, որոնք տալիս են նկատելի կորուստներ: Դրան հաջորդում է զինված թուրքերի կողմից կազմակերպած հայերի կոտորածը: Որոշ ժամանակ տիրած անդորրից հետո տեղի է

[1] Армянский вопрос и геноцид армян, стр. 432.

[2] Staatsarchiv Dresden, Akten 152, pp. 27-29; Politarchiv, R 14089, Ab. 34383. Տես նաեւ Армянский вопрос и геноцид армян, стр. 251-255.

ունենում երկրորդ իրադարձությունը՝ կրկին կրակոցներ հայկական թաղամասում: Ըստ Օպենհայմի, դրանց պատճառը չի բացահայտվում, այնինչ հայտնի էր, որ այդ պրովոկացիան սարքել էին թուրքերը՝ հայկական թաղամասը կրկին ժանդարմներ մտցնելու պատրվակով: Ժանդարմերիայի այդ ուժերին եւս հայերը ետ են մղում, եւ բոլոր այն հայերը եւս, որոնք գտնվում էին հայկական թաղամասից դուրս, շտապ կարգով տեղափոխվում են այնտեղ: Ամենակարճ ժամանակում հայերը բարիկադավորվում են եւ անցնում պաշտպանական դրության:

Հայկական թաղամասը, նշում է հեղինակը, զբաղեցնում էր քաղաքի գրեթե կեսը, տեղաբաշխված էր բլրի վրա եւ շատ հարմար իր պաշտպանության համար: Բլուրն ուներ շատ քարանձավներ: Հայերը, պատմում է Օպենհայմը, շատ հնարամտորեն իրենց տներից դեպի քարանձավները անցկացրել էին ուղեմատույցներ եւ ինչպես դրանցում, այնպես էլ խորը հորերից անցկացված կողամասերում թաքցրել էին զենքի ու զինամթերքի պաշարները (ավելի ուշ, հայոց դիմադրությունը հիմնականում ճնշելուց հետո, ստորգետնյա այդ կառույցները հայերի համար ծառայում էին որպես վերջին թաքստոցներ, որոնք դժվար էր բացահայտել): Թաղամասի բոլոր տները կառուցված էին քարից՝ մասամբ շատ ամուր կերպով: Նույնիսկ տների ռազմահանդերձման ժամանակ, դրանց պաշտպանության նպատակով, ակնհայտորեն կիրառվել էր ռազմական վարպետություն. բոլոր դռներն ու պատուհանները բարիկադավորվել էին, պատերի մեջ անցկացվել էին հրակնատներ: Դրսից դեպի թաղամասը տանող փողոցային փոքրաթիվ մատույցները կարող էին ամբողջ երկարությամբ գնդակոծվել նրանց առջեւ լայնակի դասավորված տներից, որոնք պաշարվածների ուժերով հատկապես ամրապնդվել էին: Պաշտպանական նույն համակարգը այնուհետեւ ամբողջ ժամանակ հաջողությամբ եւ հնարամտությամբ կիրառվում էր ծուռումոռ փողոցներով թաղամասի ներսում՝ փոքրիկ փողոցը պատսպարող տունը ամեն անգամ ռազմահանդերձավորվում էր որպես հենակետ: Հիմնական հենակետերն էին. հյուսիսում՝ հայերի գրաված ամերիկյան միսիան, հարավում՝ հայկական եկեղեցին, դպրոցը եւ հարակից տները, արեւելքում՝ առանձնապես ամուր մի քանի

խումբ տներ: Ամբողջ թաղամասը բաժանվել էր առանձին սեկտորների, որոնցից ամեն մեկը ուներ իր հրամանատարը: Պաշտպանների թիվը կռվելու ընդունակ մոտ 2000 տղամարդ էր: Նրանք բավարար չափով զինված էին կարաբիններով, ինչպես նաեւ փոքր տրամաչափի հրացաններով եւ ունեին շատ ռազմամթերք: Նրանք գնդացիրներ չունեին, բայց կային ձեռքի ինքնաշեն շատ նռնակներ:

Պաշտպանության սկսման պահին (սեպտեմբերի վերջը) թուրքական զինված ուժերից Ուրֆայում կային լոկ 70-80 ժանդարմներ: Հոկտեմբերի առաջին օրերին գալիս է առաջին զինվորական օժանդակ ուժը՝ մեկ գումարտակ, բայց նա դեռեւս չէր կարող մտածել որեւէ լուրջ գրոհի մասին: Հոկտեմբերի 4-ին ժամանում է Ֆաքրի փաշան, հոկտեմբերի 5-ին հետեւում է հերթական գումարտակի ժամանումը՝ դաշտային երկու հրանոթներով:

Հոկտեմբերի 6-ին սկսվում է մարտը, որի ընթացքում (ամսի 12-ին) մարտի մեջ է մտցվում նաեւ երրորդ գումարտակը՝ 12 սանտիմետրանոց երկու հաուբիցներով: Ամսի 13-ին հետեւում է գլխավոր գրոհը հարավից՝ հարթավայրից դեպի վերեւ եկեղեցու վրա: Ամսի 14-ին գրոհի ենթարկվեցին եկեղեցին եւ հարակից տները, ամսի 15-ին՝ ամերիկյան միսիան: Դրանով իսկ փաստորեն դիմադրությունը կոտրվեց: Ինչպես արդեն նշվեց, վերջին պաշտպանները թաքնվել էին քարայրներում, որոնց այնտեղից դուրս մղեցին հետագա 14 օրերի ընթացքում, ընդ սմին դեռեւս տեղի էին ունենում փոքր բախումներ:

Տների մեծ մասը հրանոթային կրակով քանդվեց, շատ տներ քանդվեցին նաեւ հրեղեններից: Հայերը մարտի ժամանակ կորցրեցին 300-400 մարդ, մնացածները բանտարկված էին եւ սպասում էին հետագա որոշման: Թուրքերի կորուստները մարտերի ժամանակ կազմել էին 50 սպանված եւ 120-130 վիրավոր: Թուրքերը որոշ զոհեր տվեցին նաեւ վերջին թաքնվածներին որոնելու ժամանակ:

Ինչպես կնկատի ընթերցողը, Վոլֆ ֆոն Վոլֆսկելի հաղորդումը, որը կրկնել է Օպենհայմը, ոչինչ չի պատմում հայերի մղած դյուցազնական մարտերի մասին եւ թուրքերի տված 2000 մարդու կորուստը դարձրել էր 50 մարդ: Նա լռության է մատնում նաեւ այն, որ հայերի դեմ կռվող երեք գումարտակից

բացի (մի քանի հարյուր զինվորներով) կառավարությունը ուրֆահայերի դեմ էր ուղղել նաեւ քաղաքի զենք կրելու ընդունակ բոլոր թուրք տղամարդկանց՝ 10 հազար մարդ, եւ նաեւ նահանգի 2000 զինված բաշիբոզուկներին: Տվյալ դեպքում զարմանալու ոչինչ չկա, եթե չենք մոռանում, որ գործ ունենք թուրքոֆիլ Վոլֆ ֆոն Վոլֆսկելի հետ: Սակայն, կրկնում ենք, նրա հաղորդած տվյալները անպայման որոշակի արժեք են ներկայացնում, մանավանդ որ ասողը, համենայնդեպս, հայ ժողովրդի բարեկամներից չէր:

Ամփոփենք. մեր համառոտակի քննարկումը ցույց է տալիս, որ առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայում ծառայած գերմանական դիվանագետների հաղորդագրությունները վկայում են, որ լիովին սնանկ են թուրքական կողմի միտումները հայերի դեմ ուղղած կեղծ մեղադրանքներով արդարացնելու երիտթուրքական կառավարության իրականացրած հայոց եղեռնը: Միաժամանակ նրանց հաղորդումներում նկատելի փաստական նյութ կա հայոց ինքնապաշտպանական կռիվների վերաբերյալ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 5

Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին 8

German diplomats on battles fought in self defense by Armeninans in 1915

Center for the Study of Nationalities Problem and Genocide
Yerevan, 1997

The booklet presents an article by Armenian National Academy of Sciences Academician, Professor V.Mikaelian on the subject of battles fought in self defense by Armenians in the Ottoman Empire in 1915. The article was presented as a report at an international scientific conference held on 23rd - 25th October 1996 in the city of Bochum in Germany. Written on the basis of official reports made by German diplomatic representations accredited to the Ottoman Empire in 1915, the article is a serious blow to the Turkish fabricators of history.

The booklet is intended for specialists and general readership.

Немецкие дипломаты о самооборонотельных боях армян (1915)

Центр по Изучению Национальных Вопросов и Геноцида
Ереван, 1997

В книге представлена статья академика НАН Армении, профессора Вардгеса Микаэляна о боях армян в Османской империи в 1915 г. Работа в виде доклада прочитан автором на международной научной конференции, проходившем 23-25 октября 1996 г. в германском городе Бохум. Написанная на основе официальных докладах аккредитованных в 1915 г. в Турции германских дипломатов, работа наносит серезный удар по турецким фальсификаторам истории.

Книга предназначена для специалистов и широкого круга читателей.

«Ազգային Հարցի եւ Գենոցիդի Ուսումնասիրման Կենտրոնը»-ը հիմնադրվել է Երեւանում: Այն ոչ կառավարական հասարակական կազմակերպություն է, որը գրանցվել է ՀՀ Արդարադատության նախարարության կողմից 1993 թ.:

Կենտրոնի նպատակն է՝ համադրելով մասնագետների ջանքերը ներդրում կատարել ազգային հարցի եւ գենոցիդի համակարգված ուսումնասիրության բնագավառում, վեր հանել այդ խնդիրներին առնչվող բազմաթիվ հիմնահարցերը եւ ծավալել գիտահետազոտական գործունեություն ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Կենտրոնը առաջնորդվում է այն հիմնադրույթով, որ ազգային եւ հարակից հարցերը մարդկային համակեցության առջեւ ծառացած կարեւորագույն խնդիրներից են եւ [illegible] այնպիսի հանրահայտ սկզբունքների, ինչպիսի ազգերի ինքնորոշումը, մարդու եւ մասնությունների իրավունքները:

ԵՊՀ Գրադարան
SU0133328